


ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲ. ՈՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱՌՈՂԻ ԿՈՍՈԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ: Արարատ ամառգրի նախորդ խմբագիր Գարեգին Վ. Յովսեփեանի գրութիւնն՝ Թիֆլիզի ՀԱՅՐԵՆԻՔ ԹԵՐԹԵՆ արատաւորաւ, 80 էջերէ ձեւացած գրքոյկը հետաքրքրական տեղեկութիւններ կը բովանդակէ: Ու նենալ փափաքողները պէտք են դիմել Թիֆլիզ, Ելեգորաշարժ Տպ. Օր. Ն. Աղանեանցի:

ՆՈՐԱՊԱՍԿԵՆԻՐ: — Յուշարար՝ Թատերական — Գրական — Գեղարուեստական Պատկերազարդ երկշաբաթաթերթին VII յաւելումն է, Նախապատկեր կատակերգութիւնը՝ երկու գործողութեամբ: Թիֆլիս տպուած սոյն 26 էջերէ բաղկացած մեծագիր տետրը 60 կոպէկ կ'արժէ:

Ի ՅԵՇԱՏԱԿ ՀԱՅ ԲԵՄԻ ՅԻՄՆԱՄԵԿԻ ՏՕՆԱՄԵՐՈՒՆԵԱՆ Ի ԲԱԳՈՆ: — Այս ալ Յուշարարի արտակարգ յաւելումն է: Ապրիլ և վախճանած հայ Թատերախաղերու և Թատերգութիւն գրողներու կենդանագրքներով զարդարուած և օգտակար գրութիւններու բովանդակութեամբ՝ շահեկան հրատարակութիւն մ'է:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԱՏՐՈՆ. — Հասկեր ամառաթերթի մանկավարժական գրադարանի XVIII գրքոյկն է՝ 60 էջերով, թարգմ. Մ. Ասիլեանէ: Կը տրվցնէ թէ ինչպէս պէտք է պատրաստել ընտանեկան Թատրոնի բեմը. ինչպէս պէտք է սովորիլ դերերը, բեմի կահաւորութիւնը և այլն: Գինն է 20 կոպէկ, լոյս տեսած է 1908ին Թիֆլիզու Օր. Ն. Աղանեանի Ելեգորաշարժ Տպարանէն:



ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Մ Ո Ւ Ր Ա Տ Ռ Ա Փ Ա Յ Է Լ Ե Ա Ն

ՆԱԵԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Թոյ. 1. Վենետկոյ Միթարեան Վեբապատուեալ Հարց տնօրինութեան ներքե գտնուող Բարիգու, Վենետկոյ, Բատուայի և Գատը-Գիւղի Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու Աշակերտներն եղբայրակցութիւն մը կազմեցին ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԵԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ աւուան ներքե:

Թոյ. 2. Ա. — Միութեան նպատակն է եղբայրակցական յարաբերութիւն մը գոյացնել Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտաց մէջ, աշակցելով իրարու նիւթապէս և բարոյապէս. և այս նպատակաւ հաստատել Ընդհանրաւ-Լատին մը Միութեան անդամներու յատուկ:

Բ. — Միութեան նպատակն է նաև, յաւաքիկային երբ իր միջոցները ներքե,

1°. Սատարել կամ ձեռնարկել կրթական ազգօգուտ գործերու, որոնք պիտի առաջարկուին Տնօրէն Ժողովին կողմանէ և հաստատուին Ընդհանուր Ժողովէն:

2°. Ունենալ իրեն յատուկ Թերթ մը՝ որ պիտի ըլլայ Միութեան ինքնուրոյն օսկանը և պիտի ծառայէ անոր զաղափարներուն տարածման:

Թոյ. 2. Միութեան կրնան անդամակցիլ միայն Բարիգու, Վենետկոյ, Բատուայի և Գատը-Գիւղի Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու նախկին աշակերտները:

Միութիւնը կ'ընդունի նաև Մուրատ-Ռափայէլեան աշակերտներէն զատ Պատույ անդամներ:

Պատույ անդամներ կ'ըլլան այնպիսի անձեր՝ որոնք Միութեան իրենց ուղղակի աշակցութեամբ կամ իրենց դիւքովը և կամ իրենց տաղանդովը պատիւ կը բերեն: Սոյն անդամներուն ընդունելութիւնը կ'առաջարկուի Տնօրէն Ժողովին կողմանէ և կը հաստատուի Ընդհանուր Ժողովէն:

Պատույ անդամները Ժողովներու մէջ ձայն չունին և Տնօրէն Ժողովին անդամ չեն կրնար ընտրուիլ:

Անգամ չեղող անձ մը կրնայ Միութեան ընտանեկան երեկոյթներուն մասնակցիլ պայմանաւ որ Միութեան անդամներէն մին զինքը ներկայացնէ և իրեն համար ստորագրէ մուտքի Տոմարին մէջ:

Միութեան կեդրոնը Պոլիս է, սակայն գաւառները կամ արտասահման գտնուող աշակերտներն ալ իրաւունք ունին անդամակցելու:

Թոյ. 4. Միութեան հասոյթի աղբիւրները երկու տեսակ են, ողղակի և անողղակի:

Ուղղակի հասոյթներն են,

1°. Մտք տուրք մը, մէկ անգամ վճարելի, մէկ քառորդ ոսկի, կէս ոսկի և մէկ օսմ. ոսկի:

2°. Ամսական բաժնեգին մը՝ 5 դահեկան, 10 դահեկան և 20 դահեկան: